		սական պաշտաման, և կացեալ այնու վերտառութեամբ՝ վախճանեցաւ յամի 1828։
98	1828	Բազմասար Արքեպիսկոպոս Հայ ազգի Զալալեանց իբրեւ ազգական յիշեալ Սարգիս կաթուղիկոսի և ժառանգ կաթուղիկոսութեան Աղուանից՝ պատուեցաւ տիտղոսիւ մետրապոլիտութեան, իսկ այնուհետեւ համաձայն 1836 ամի կարգադրութեան Հայասատանեայց եկեղեցւոյ (Պոլսոյ էջենիայի) յաջորդք Աղուանից կաթուղիկոսութեան անուանեցան թեմական վիճակաւոր առաջնորդ Ղարաբաղու թեմի. և այսպէս իսպառ անհետացաւ Աղուանից կաթուղիկոսութիւնն և բարձան վէճք և կռիւք հոգեւորականաց Գանձասար և Ամարաս և միւս վանորէից Արցախայ։

Խնդրեմ Աղուանցիք կորուսին որպէս զկրօն՝ և զլեզու և զազգութիւն իւրեանց, նոյնպէս և զթագաւորական և զհայրապետական իշխանութիւնն։

Աղաչեսցուք զԱստուած տալ ժամանակ Աղուանցւոյ ի ձեռս բերել փոխանակ այնց ամենից մի միայն զԲրիստոնէական հաւատն և արժանանալ երկնային արքայութեան։ Ամէն։

ՑՈՒՑԱԿ

Գրչագիր աւետարանաց և այլ գրեանց գտելոց ի գիւղս Զամախւոյ թեմի, որք են.

Ա. Աւետարան Մատրասայ գիւղի եկեղեցւոյ մէջ, գրուած բամբակեայ կոկ թղթի վրայ, հասարակ նկարներով, պատկերներով և թռչնագրերով։ Ըստ հասարակեալ սովորութեան գրչագիր գրողաց՝ սոյն աւետարանի սկզբում եւս նկարուած են Քրիստոսի տնօրէնութեան պատկերներն, որ օր. Աւետման, Ծննդեան, Մկրտութեան, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, են։

Աւետարանս ունի և յիշատակարան, որոյ վերջին մասն է հետեւեալն՝

“Փառք ամենասուրբ Երրորդութեան . . . . . Եւ արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառս Մ